

Վերլուծություն

Սևանա լճի էկոհամակարգի խոցելիությունը կլիմայի փոփոխության պայմաններում

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական կարևորագույն մարտահրավերներից է կլիմայի գլոբալ փոփոխությունը, որը հատկապես զգալի ազդեցություն ունի լեռնային և փակ ջրավազանների վրա: Այդ համատեքստում Սևանա լիճը, ունենալով յուրահատուկ էկոհամակարգ, քաղցրահամ ջրի եզակի պաշար, առանձնանում է իր բարձր խոցելիությամբ: Հայաստանի համար բարձր բնապահպանական, ռազմավարական և անվտանգային, սոցիալ-տնտեսական նշանակություն ունեցող լճի պահպանությունը էկոհամակարգի հավասարակշռության վերականգնման առաջնահերթ խնդիրներից է:

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման պետական քաղաքականությունն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատված միջոցառումների տարեկան ծրագրին համապատասխան, որի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Սևանա լճի մասին»¹ և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին»² ՀՀ օրենքների¹² պահանջներից:

Հայաստանի Հանրապետությունը, ընդգրկվելով կլիմայի փոփոխությանը վերաբերող միջազգային տարբեր գործընթացներում, վավերացրել է մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ «ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան կլիմայի փոփոխության մասին»³, «Փարիզյան համաձայնագիրը»⁴, «Կենսաբազմազանության մասին կոնվենցիան», որոնք կարևոր դեր ու նշանակություն ունեն միջազգային կառույցների հետ ջանքերի համատեղման միջոցով մեր երկրի բազմաթիվ բնապահպանական և էկոլոգիական խնդիրների լուծման համար:

Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ ԿՓՇԿ) իմաստով՝

- «Կլիմայի փոփոխությունը» կլիմայի այնպիսի փոփոխություն է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պայմանավորված է գլոբալ մթնոլորտի բաղադրության մեջ փոփոխություններ առաջացնող մարդկային գործունեությամբ, և որը հավելվում է համեմատելի ժամանակահատվածների ընթացքում դիտարկվող կլիմայի բնական տատանումներին»:
- «Կլիմայի փոփոխության արդյունքում առաջացած փոփոխությունները զգալի բացասական ազդեցություն են գործում բնական և կառավարվող էկոհամակարգերի կառուցվածքի, վերարտադրման կարողության կամ արտադրողականության, սոցիալ-տնտեսական համակարգերի գործունեության կամ մարդու առողջության և բարեկեցության վրա»:

Կլիմայի փոփոխությունը (այսուհետ՝ ԿՓ) Սևանա լճի էկոհամակարգի վրա ունի բազմաշերտ և երկարաժամկետ ազդեցություն, որը դրսևորվում է ջրի մակարդակի, ջերմաստիճանի, կենսաբազմազանության և ջրի որակի փոփոխություններով:

¹ <https://www.arlis.am/hy/acts/200928>

² <https://www.arlis.am/hy/acts/212008>

³ <https://www.arlis.am/hy/acts/77806/latest>

⁴ <https://www.arlis.am/hy/acts/115504/latest>

ՀՀ-ում ԿՓ միտումները վերլուծելու, մշակելու և տարբեր ոլորտների վրա հնարավոր ազդեցությունները գնահատելու նպատակով իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնք ամփոփված են ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի չորս ազգային հաղորդագրություններում, ինչպես նաև ներկայացված են միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերում, հետազոտական աշխատանքների փաստաթղթերում, Սևանի ջրավազանային կառավարման տարածքների համար մշակված ջրավազանային կառավարման պլաններում:

Հարկ է նկատել, որ վերջին տարիներին ջրի մակարդակի տատանումները հանգեցրել են Սևանա լճի էկոհամակարգի խախտմանը: Ափամերձ տարածքներում ազոտական և ֆոսֆորական պարարտանյութերի օգտագործումը և դրանց հոսքը լիճ, ինչպես նաև ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրատակ եղած ափամերձ անտառները շարունակաբար իրենց բացասական ազդեցությունն են թողնում լճի հարուստ կենսաբազմազանության վրա՝ ակտիվացնելով կապտականաչ ջրիմուռների ու ոչ պիտանի այլ տեսակների զարգացումը: Մտահոգիչ է նաև Սևանա լճից գոլորշիացումը՝ կապված տեղումների, ջերմաստիճանի փոփոխությամբ: «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով⁵ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակ է սահմանվել մինչև 170 մլն խմ: Ջրբացթողումներն իրականացվում են Կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված չափաքանակի շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան:

«Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.11.2022թ. №1692-Լ որոշման⁶ հավելվածի 38-րդ կետով նշված է. «ԿՓ ազդեցությունն էական է նաև Սևանա լճի ավազանի վրա: Ըստ «Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության չորրորդ ազգային հաղորդագրության»՝ կանխատեսվում է, որ Սևանա լիճ տարեկան գետային ներհոսքը մինչև 2100թ. կկրճատվի 17.5-33.8%-ով՝ կախված սցենարից: Գետային հոսքի ծավալի նվազումն անխուսափելիորեն կհանգեցնի նաև ջրի որակի վատթարացման: Ջրային ռեսուրսների վրա մարդածին ճնշումների ավելացումը կարող է սրել իրավիճակը: Արդեն կարելի է նկատել կլիմայի փոփոխության բացասական հետևանքները Սևանա լճի վրա, որոնք ուղեկցվում են նաև այլ մարդածին ճնշումներով»:

Նույն որոշման հավելվածով սահմանվել է «Ջրային ռեսուրսների ոլորտում ԿՓՇ ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկ 2022-2026 թթ. համար», որի 19-րդ կետով նախատեսված է Սևանա լճի օրենսդրական կարգավորումների վերանայում ԿՓ համատեքստում Սևանա լճի էկոհամակարգի պահպանման և վերականգնման նպատակով: Ակնկալվող արդյունքն է՝ ԿՓ պայմաններում Սևանա լճի էկոհամակարգի տեսլականի սահմանում և լճի պահպանության օրենսդրական դաշտի բարելավում:

2025թ.դեկտեմբերի 25-ի ՀՀ կառավարության 1962-Լ որոշմամբ⁷ հաստատվել է «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2026-2035 թվականների ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները և դրա իրականացման ծրագիրը»:

⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180963>

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188853>

⁷ <https://www.arlis.am/hy/acts/218990/latest>

Ուշագրավ է որոշման հավելված 1-ում Սևանա լճի՝ Հայաստանի և ողջ Կովկասի ամենամեծ քաղցրահամ ջրային ավազանի վրա կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցության հետևանքների նկարագրությունը: Նրանում մասնավորապես նշվում է.

«Կլիմայի փոփոխությունը կհանգեցնի լճի ջրի ջերմաստիճանի բարձրացման, երկարատև շերտավորման և ամռանը կապտականաչ ջրիմուռների հաճախակի ծաղկման՝ լրջորեն վատթարացնելով Սևանի ջրի որակը: Առանց նպատակային կառավարման միջոցառումների Սևանա լիճն անխուսափելիորեն կտուժի՝ ջրի որակի՝ կլիմայի փոփոխություններով պայմանավորված վատթարացմամբ: Ակնկալվում է, որ կխորանա սեզոնային ջրային պակասը՝ հատկապես ամռանը, երբ ջրի պահանջարկը բարձր է, և Սևանա լճից ու այլ ջրամբարներից լրացուցիչ ջրառ է իրականացվում: Այս մարտահրավերներն էլ ավելի են բարդանում բնակչության աճի և գյուղատնտեսական կարիքների մեծացման պայմաններում՝ արդյունավետ ջրային կառավարումը դարձնելով կենսական՝ պահպանելու ապրուստի միջոցներն ու տնտեսությունը»:

Նույն հավելվածով սահմանված է, որ ջրային անվտանգության և հեղեղների նկատմամբ դիմակայունության մարտահրավերներից էլնելով՝ Հայաստանն առաջնահերթ է համարում կեղտաջրերի մաքրման համակարգերի զարգացումը, հատկապես՝ Սևանի ավազանում, որպեսզի կանխվի Սևանա լճի աղտոտումը, և հնարավոր լինի ապահովել մաքրված ջրի անվտանգ օգտագործումը ոռոգման և այլ, ոչ խմելու նպատակներով: Իսկ կլիմայական հարմարվողականության ռազմավարության շրջանակում Հայաստանը հանձնառություն է ստանձնել՝

- ջրախնայող և խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմամբ, ջրի և նստվածքների որակի մշտադիտարկման բարելավմամբ և խոնավ տարածքների վերականգնմամբ իրականացնել Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում,
- ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում՝ առաջնահերթություն տալով կլիմայական խելացի համակարգերին՝ ջրօգտագործումը օպտիմալացնելու և ջրառը Սևանա լճից նվազեցնելու նպատակով:

Այս միջոցառումները ուղղված են ջրային ռեսուրսների պահպանմանը և Սևանա լճի՝ որպես կենսական քաղցրահամ ջրային ռեսուրսի դիմակայունության ապահովմանը կլիմայի փոփոխության պայմաններում:

Այսպիսով, կլիմայի փոփոխությունը Սևանա լճի էկոհամակարգի խոցելիության առանցքային առանցքային գործոններից մեկն է՝ արդեն առկա բնապահպանական խնդիրների հետ համատեղ:

Ջրի որակի վատթարացումը, կենսաբազմազանության կորուստը և սոցիալ-տնտեսական ռիսկերը պահանջում են համակցված և երկարաժամկետ քաղաքականություն: Սևանի պահպանությունը հնարավոր է միայն ինտեգրված մոտեցմամբ, որը կներառի կլիմայական հարմարվողականություն, արդյունավետ ջրային կառավարում, իրավական վերահսկողության ուժեղացում և համայնքային ակտիվ մասնակցություն:

Հայաստանի համար այսօր օրախնդիր է ջրային պաշարների պահպանումն ու ողջամիտ օգտագործումը: Այդ առումով Սևանա լճի էկոհամակարգի վերականգնմանն ուղղված ռազմավարական միջոցառումները պետք է նպատակաուղղվեն լճի մակարդակի կայուն

կառավարման, ջրի որակի բարելավման և միջուրրտային նախաձեռնությունների իրականացմանը: Հայաստանը պետք է ձեռնարկի արդյունավետ քաղաքականություն՝ մեղմելու կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը և նպաստելու կայուն զարգացմանը:

Մանուշ Նալբանդյան

«Ա.Գ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան

25.02.2026թ.